ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

Առաջադրանքների լուծման համար տրվում է **75** րոպե | **7-8**-րդ դասարաններ

- **Յուրաքանչյուր առաջադրանքի համար տրված պատասխաններից ճիշտ է միայն մեկը:**
- **Չլուծված առաջադրանքի համար միավորներ չեն գումարվում և չեն հանվում:**
- **Մրցույթի մասնակիցը կարող է վաստակել առավելագույնը 120 միավոր:**
- **Մրցույթի ավարտին առաջադրանքների թերթիկը մնում է մասնակցի մոտ:**
- **Մրցույթի մասնակիցներին ներկայացվող գլխավոր պահանջը առաջադրանքներն ինքնուրույն և ազնվորեն կատարելն է:**

3 միավոր գնահատվող առաջադրանքներ

1. Ո՞ր առածի երկրորդ մասն է գաղտնագրվել:

... վոտյունքեեչրեդա՝ տյունայբքե

Ա. Լեզուդ կարճ պահե, … ***Բ.*** Գլուխդ պաղ պահե, … ***Գ.*** Բերանդ լեզու դիր, ...
Դ. Լավ է կանգնած մեռնել, … ***Ե.*** Հաց ասին, հասավ ...

2. Ո՞ր տառը նույն ձևով կսոսնձվի ***դալար, ճառային, տարաձև, տարագիր, գնել*** բոլոր բառերին և կկազմի նոր բառեր:

Ա. ի ***Բ.*** կ ***Գ.*** ա ***Դ.*** օ ***Ե.*** վ

3. Ի՞նչ առած է գաղտնագրվել:

1 | 1 = 1000 | 1000 ≠ 1

Ա. Հազար անգամ ասացինք, հազար անգամ լսեցինք:
Բ. Մեկ կա՝ հազար արժե, հազար կա՝ մեկ չարժե:
Գ. Մեկ հազար լինի, հազարը պետք չէ:
Դ. Մեկին հազար ասա, մեկին՝ հազար ու մեկ:
Ե. Եթե մեկը հավասար է հազարի, բա մյուսը ինչի՞ է հավասար:

4. Ո՞ր բառն է կազմվում ***կուլա*** և ***ներկ*** բառերի բոլոր տառերով:

Ա. նորելուկ ***Բ.*** կերակրել ***Գ.*** ներկրում ***Դ.*** կուրանալ ***Ե.*** նկարելուկ

5. Տարբերակներից ո՞րը պետք է տեղադրել մեղվիկի փոխարեն, որ ստացվի իմաստով իրարից բոլորովին տարբեր երկու նախադասություն:

Վրա կտա, կառուցած տները:
վրա կառուցված տները կտա:

Ա. կքանդի ***Բ.*** կկործանի ***Գ.*** կավերի ***Դ.*** կկլանի ***Ե.*** կփոշիացնի

6. *Աչքեր ունի, ոտքեր չունի,*
Մարդ կսպանի՝ ձեռքեր չունի,
Հավկիթ ունի, փետուր չունի,
Շապիկ ունի, որ կար չունի: (ժողովրդական հանելուկ)

Ա. օձ ***Բ.*** կրակ ***Գ.*** կրիա ***Դ.*** մողես ***Ե.*** քամի

7. Ի՞նչ է գաղտնագրվել նկարելուկով:

1 32 11 20 5 6 20 24 31

Ա. Արա՛, տուն արի: ***Բ.*** Արի, քեզ տամ: ***Գ.*** Արի մեզ մոտ:
Դ. Անի՛, արի տուն: ***Ե.*** Ասա թող գա:

8. ***Լորտու, լրատու, հաշվետու, ձեռնտու, ստնտու*** բառերից չորսը ենթարկվում են նույն օրինաչափությանը: Ո՞րը չի ենթարկվում այդ օրինաչափությանը:

Ա. լորտու ***Բ.*** լրատու ***Գ.*** հաշվետու ***Դ.*** ձեռնտու ***Ե.*** ստնտու

9. ***Սխալ*** բառը որոշակի սկզբունքով կրկնակի մկրատելով ստանում են երկու նոր բառեր (տե՛ս նկարը): Տարբերակներից ո՞րը կրկնակի չի մկրատվի այդ սկզբունքով:



Ա. մական ***Բ.*** տիրական ***Գ.*** քլոր ***Դ.*** քծնել ***Ե.*** ցերեկ

10. ***Սուր, հակ, հում, շոր, զով*** բառերից չորսում թաքնագրվել են մեկ «ընտանիքի» անդամներ: Ո՞ր բառում է «խորթը»:

Ա. սուր ***Բ.*** հակ ***Գ.*** հում ***Դ.*** շոր ***Ե.*** զով

4 միավոր գնահատվող առաջադրանքներ

11. Եթե ***արբել, արփենալ, երբներանգ, բամբասել, գարտնի, գախտագողի, դթում, դարակազմիկ, թղտակից, թխթապանակ, ճոխփյուն, երփնավառ, ինքնանփռի, գարթուղի, գարթուցիչ*** բառաշարքից հանենք սխալ գրվածները, կստանանք բառեր, որոնք՝

Ա. ունեն վանկերի միևնույն քանակը
Բ. ունեն գրված ձայնավորների միևնույն քանակը
Գ. դասավորված են այբբենական ճիշտ հաջորդականությամբ
Դ. կազմում են հակառակ իմաստով բառազույգեր
Ե. կազմում են մոտ իմաստով բառազույգեր

12. Ի՞նչ նախադասություն կստանանք, եթե յուրաքանչյուր տառախմբում 3 տառ ջնջենք և տառերի տեղերը չփոխենք:

ԴԱՐԱՅՆԻԿՈՒՄ ԲԱԼՈՐԵՆԻՆ ՆՇԿՄԱՐՏԵՑ:

Ա. Դարակի բանալին նկատեց: ***Բ.*** Դարակում բալեր շարեց:
Գ. Արայիկը լորենի նշմարեց: ***Դ.*** Դարանի բալենին նկարեց:
Ե. Դարանում բորենի նկատեց:

13. Աջ կողմում բերված է տառաթվային ծածկագիր, որում յուրաքանչյուր տառին համապատասխանում է մեկ թվանշան: Նույն տառերին համապատասխանում են նույն թվանշանները: Բերված տարբերակներից ո՞րն է համապատասխանում այդ տառաթվային ծածկագրին:

```
  ՇՈՒՆ
+ ԿԱՏՈՒ
  ՄԱՐՏ
```

Ա.	***Բ.***	***Գ.***	***Դ.***	***Ե.***
935	935	486	596	435
+	+	+	+	+
7083	6083	9018	9073	8096
8018	7018	9504	9669	8531

14. ***Խիճ, կարճ, դղյակ, ծածկ, եղինջ, զրահ, կարգ, խիտ*** բառերից ամենաշատը քանի՞սը նոր շունչ կստանան, եթե բառամիջում նույն ձևով ավելացնենք մեկ տառ:

Ա. 4 ***Բ.*** 5 ***Գ.*** 6 ***Դ.*** 7 ***Ե.*** 8

Սնունդ հասանելի է «Այբ» հանձնաժողովի

15. ***Անպարտելի, անզուգական, անխիղճ, անկեղծ, անմատչելի*** բառերից չորսը «մտերիմներ» գտան, երբ *ան*-ն իրեն միացրեց ***նենգ, նկուն, նվաճ, նման*** բառերը: Տարբերակներից ո՞րը «մտերիմ» չգտավ նոր կազմված բառերի մեջ:

Ա. անպարտելի ***Բ.*** անզուգական ***Գ.*** անխիղճ ***Դ.*** անկեղծ ***Ե.*** անմատչելի

16. Ո՞ր տեղանունն է Անին որոշակի օրինաչափությամբ գաղտնագրել ***եռաեերթ, հողածելի, երկյուղել, մեծարժեք, ձիասայլ, նպատակային, տարանջատ, դաշնագիր*** բառաշարքում:

Ա. Սանահին ***Բ.*** Հաղարծին ***Գ.*** Գոշավանք ***Դ.*** Ծաղկաձոր ***Ե.*** Հայաստան

17. Արեգը ***հանճար, մատղաշ, պատյան, պարույկ, պարզկա*** բառաշարքից վերցնում էր մեկ բառ, դրանից հանում մեկ տառ և այդ բառի մնացած տառերով կազմում նոր բառ: Ո՞ր բառից Արեգը մետաղ ստացավ:

Ա. հանճար ***Բ.*** մատղաշ ***Գ.*** պատյան ***Դ.*** պարույկ ***Ե.*** պարզկա

18. Ի՞նչ է նշանակում նկարելուկով գաղտնագրված բառը:

ԳԻՄ 0, Ց

Ա. դարակ ***Բ.*** ձայն ***Գ.*** աղմուկ ***Դ.*** փական ***Ե.*** սարք

19. Ամենաշատը քանի՞ «թաքնված» տարբեր հրաման տվեց սպան Դանիելին, Գրիգորին, Առնակին, Նարինեին, Ասատուրին, Լուսաբերին, Տարոնին և Աղասուն:

Ա. երեք ***Բ.*** չորս ***Գ.*** յոթ ***Դ.*** ութ ***Ե.*** տասը

20. Տարբերակներից չորսում երկուական տառ նույն սկզբունքով և՛ պոչ է, և՛ գլուխ: Ո՞ր տարբերակն է զուրկ այս հատկությունից:

Ա. արմատապտուղ ***Բ.*** գահակից ***Գ.*** ժամասլաք ***Դ.*** այլիմաստ ***Ե.*** բազմազգ

5 միավոր գնահատվող առաջադրանքներ

21. Ի՞նչ է գաղտնագրվել խառնագրում:

իցեթղահասետակե

Ա. առած ***Բ.*** դարձվածք ***Գ.*** շրջասույթ ***Դ.*** սուտասելուկ ***Ե.*** թևավոր խոսք

22. Ո՞ր օրինաչափությամբ է կազմված տառաշարքը:

Ծ, Զ, Շ, Չ, Դ, Ջ, Ռ

Ա. ըստ տառերի թվային արժեքների
Բ. ըստ տառերի՝ այբուբենում ունեցած հերթական համարների
Գ. ըստ տառանունների
Դ. ըստ այբբենական կարգի
Ե. ըստ բաղաձայնների տեսակների

23. Գոհարը որոշակի օրինաչափությամբ կազմեց ***ժապավեն, խորթ, հանձնագիր, ճաղապատ, նավագ*** բառաշարքը: Անահիտը բառաշարքում գտավ մեկ այլ օրինաչափություն և շարունակեց բառաշարքը՝ պահպանելով երկու օրինաչափությունները: Տարբերակներից ո՞րը գրեց Անահիտը:

Ա. ծանոթ ***Բ.*** չորս ***Գ.*** բոլոր ***Դ.*** շտապ ***Ե.*** չամիչ

24. *Տուն գնալիս միշտ մենակ եմ,*
Մեծին ու փոքրին իրար եմ կապում,
Ուսում առնելիս երկու տեղում եմ:
Ուրախանալիս միշտ առաջինն եմ,
Իսկ տխրելիս թաքնվում եմ ամենքից:

Ինչի՞ մասին է բանաստեղծությունը:

Ա. չափման միավորի ***Բ.*** երկրաչափական մարմնի ***Գ.*** տառի
Դ. ժամանակի ***Ե.*** եղանակի

25. Ի՞նչ բառ է թաքցրել մեղվիկը:

կարպետ, նկարագիր, անկարելի, վանկարկել, գծանկար, յուղանկար, բարձրակարգ,

Ա. համակարգ ***Բ.*** ուրվանկար ***Գ.*** կարկանդակ
Դ. երկարել ***Ե.*** հայրենակարոտ

26. Մոգական քառակուսու յուրաքանչյուր տողում, յուրաքանչյուր սյունակում և անկյունագծերից յուրաքանչյուրում գրված թվերի գումարները հավասար են: Աղյուսակի մեջ ո՞ր երկու բառերի տեղերը պետք է փոխել, որ աղյուսակը դառնա մոգական քառակուսի:

Հերկուլես	ֆիննուհի	չորսամյա
բերեք	հինգաստղանի	յոթերորդ
կովեցնել	մեկնարկ	խանութ

Ա. բերեք և յոթերորդ ***Բ.*** բերեք և չորսամյա ***Գ.*** ֆիննուհի և յոթերորդ
Դ. ֆիննուհի և խանութ ***Ե.*** հինգաստղանի և մեկնարկ

27. Ի՞նչ բառ է թաքցրել մեղվիկը:

ասուպ, ապար, արմավ, ավան, անրակ, ակնիկ,

Ա. աստառ ***Բ.*** աղմուկ ***Գ.*** ամրակ ***Դ.*** ակնոց ***Ե.*** անտառ

28. Տարբերակներից որո՞վ է գաղտնագրված հայտնի պատմվածքի վերնագիրը:

Լավ գործ է այն,
Տվեց շատ բան,
Թե ոնց պիտի
Էլ չվարվենք:
Փողը կյանքում
Արժեք չունի….
Օդի պես է մաքուր խիղճը,
Չընկնենք մեղքի խոր ճահիճը:

Ա. գաղտնագրված է աջից ձախ ***Բ.*** գաղտնագրված է ձախից աջ
Գ. գաղտնագրված է վերևից ներքև ***Դ.*** գաղտնագրված է ներքևից վերև
Ե. գաղտնագրված է տառերի քանակով

29. Ի՞նչ բառ է թաքցրել մեղվիկը:

աղվես, դուրեկան, նահանջ,
իմաստուն, քորոց, հանրագումար,
, չերքեզ, մանրանկար

Ա. սոսինձ ***Բ.*** չեչեն ***Գ.*** հնձվոր ***Դ.*** մարզագույք ***Ե.*** գիտակ

30. Ի՞նչ տառ է թաքցրել մեղվիկը:

պ, է, չ, ա, բ,

Ա. ջ ***Բ.*** ր ***Գ.*** հ ***Դ.*** ն ***Ե.*** տ

Վերահրատարակումը միայն «Այբ»-ի հրատարակությամբ